*Հավելված N 3*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*
*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Քաջարանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կապալային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄՔԲ-ՔՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հոկտեմբերի 05-ին կնքված N ՀՀ-ՍՄՔԲ-ՔՀ-ԳՀԱՇՁԲ-17/1-1 պայմանագրում 2017 թվականի նոյեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 – կապալային աշխատանքների ձեռքբերման համար կնքված պայմանագրի կատարման ժամկետի ոչ բավարար լինելը:

Փոփոխության նկարագրություն- Պայմանագրի կատարման ժամկետը երկարացվել է 30 օրացուցային օրով և սահմանվել է մինչև 20.12.2017թ:

Փոփոխության հիմնավորում- Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ :

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան

# Համաձայնագիր 01

05 հոկտեմբերի 2017թ-ի կնքված ՀՀ-ՍՄՔԲ-ՔՀ-ԳՀԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

ք.Քաջարան 20 նոյեմբերի 2017թ

Քաջարանի համայնքապետարանը,ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի,որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Համբարձումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու),մյուս կողմից,հիմք ընդունելով Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և վերոնշյալ պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 8.8 կետը,կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

**Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.**

**1.**Պայմանագրի 1.3 կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 20 դեկտեմբերի 2017թ :

**2.** Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածը փոխարինել սույն Համաձայնագրի մաս կազմող N 1 հավելվածով:

## 2.Այլ պայմաններ

**2.1** Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**2.2** Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

**2.3** Սույն Համաձայնագիրը կազմված է 1 /մեկ/ էջից և N 1 հավելվածից, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312467104
հվհհ 09414191

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ
ք.Քաջարան,Շիրվանզադե 4/34
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հհ 1150001528728790
հվհհ 09425679

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*ՀՀ-ՍՄՔՔ-ՔՀ-ԳՀԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով*
*պայմանագրում լրացումներ և փոփոխություններ*
*կատարելու մասին 17 նոյեմբերի 2017թ կնքված Համաձայնագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Քանդման աշխատանքներ /առկա կիսաքանդ շինության քանդում և շին. աղբի տեղափոխում/ | պայմանագրի կնքման օր | 06.10.2017 թ. |
| 2 | Հողային աշխատանքներ | 09.10.2017 թ. | 12.10.2017 թ. |
| 3 | Հիմքերի կառուցում | 12.10.2017 թ. | 17.10.2017 թ. |
| 4 | Պատերի և ե/բետոնյա կոնստրուկցիաների կառուցում | 17.10.2017 թ. | 27.10.2017 թ. |
| 5 | Տանիքի կառուցում | 20.11.2017 թ. | 05.12.2017 թ. |
| 6 | Դռների և պատուհանների տեղադրում | 05.12.2017 թ. | 08.12.2017 թ. |
| 7 | Սան. տեխնիկական և էլեկտրոմոնտաժային աշխատանքներ | 08.12.2017 թ. | 14.12.2017 թ. |
| 8 | Հարդարման աշխատանքներ | 14.12.2017 թ. | 20.12.2017 թ. |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **պայմանագրի կնքման օր** | **20.12.2017 թ** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312467104
հվհհ 09414191

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ
ք.Քաջարան,Շիրվանզադե 4/34
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հհ 1150001528728790
հվհհ 09425679

/ստորագրություն/
Կ.Տ